**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3**
**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/8» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ(ԳՀ)**
**ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան 15-ը դեկտեմբերի 2017թ.
ժամը 11[00]

**Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝**
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ թիկունքային ապահովման վարչության պետի տեղակալ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Հ. Մելիքյան,
**գնահատողներ՝**
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պարենային, դեղամիջոցներով և բժշկական սարքավորումներով ապահովման բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 3-րդ դասի խորհրդական Հ. Ավետիսյան,
ՀՀ ՊՆ ռազմաբժշկական վարչության մատակարարման բաժանմունքի պետ, բ/ծ կապիտան Ն. Հարությունյան,
ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա լեյտենանտ Ս. Նիկոլյան,
ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի սպա, մայոր Կ. Բրուտյան,
**Գնումները համակարգող՝**
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Ռ.Մարդոյան

**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/8» ծածկագրով հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

(Ռ. Մարդոյան)

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2.«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/8» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4.Ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/8» ծածկագրով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.**

(Ռ. Մարդոյան)

**1.1** ՀՀ ՊՆ կարիքների համար **«Բժշկական պարագաների»** ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/8» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

| Հ/հ | Մասնակիցների անվանում | Հասցե |
|---|---|---|
| 1. | «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ | ք. Երևան, Մարգարյան 37, տարածք 131 |

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**2 . « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.**

(Ռ. Մարդոյան)

Մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում **20.12.2017թ., ժամը 11:30-ին** կայացած նիստում հանձնաժողովն արձանագրեց.

2.1 «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ի էլեկտրոնային հայտը www.armeps.am կայքի կողմից համարվել է հետագա գնահատման համար ընդունելի, իսկ «ԱՐ-Մեդիկա» և «Մեգիէլ» ՍՊԸ-ների կողմից ներկայացված էլեկտրոնային հայտերը համակարգի կողմից գնահատվել են են հետագա գնահատման համար անընդունելի (հանձնաժողովը հայտերը բացելու կամ գնահատելու հնարավորություն չի ունեցել(էլեկտրոնային հայտերին որևէ փաստթուղթ կցված չէր)):

2.2 «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ի էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2.3 «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ի հայտով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին):

**3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին**

(Ռ. Մարդոյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

| Հ/հ | Գնման ենթակա ապրանքի անվանումը | Չափի միավորը | Քանակը | Նախահաշ. գինը (դրամ) | «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ | | | 1-ին տեղ զբաղեցնող մասնակից |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | ԱԱՀ-ով | ԱԱՀ | Առանց ԱԱՀ | |
| 1. | **Բժշկական այլ գործիքներ և պարագաներ** /Կասետներ նախատեսված sterrat 100 s տերիլիզատորի համար/ | տուփ | 35 | 10,080,000 | 10,080,000 | 1,680,000 | 8,400,000 | «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ |
| 2. | **Բժշկական այլ գործիքներ և պարագաներ** /Կասետներ նախատեսված sterrad* nx ստերիլիզատորի համար/ | տուփ | 20 | 6,617,000 | 6,612,000 | 1,102,000 | 5,510,000 | «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 3. | **Վիրաբուժական գործիքներ** /Հարմոնիկ ուլտրաձայնային էլեկտրադանակի ծայրադիր / | տուփ | 9 | 27,000,000 | 19,635,300 | 0 | 19,635,300 | «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ |
| 4. | **Վիրաբուժական գործիքներ** /Հարմոնիկ ուլտրաձայնային ծայրադիր/ | տուփ | 9 | 27,864,000 | 20,249,100 | 0 | 20,249,100 | «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ |
| 5. | **Վիրաբուժական գործիքներ** /Մկրատ ձեռքի ակտիվացիայով հյուսվածքների ադապտացիայի համակրգով՝ ուլտրաձայնային հարմոնիկ նշտարի համար/ | տուփ | 2 | 5,272,680 | 3,722,000 | 0 | 3,722,000 | «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ |
| 6. | **Վիրաբուժական գործիքներ** /Մկրատ ձեռքի ակտիվացիայով հյուսվածքների ադապտացիայի համակարգով՝ ուլտրաձայնային հարմոնիկ նշտարի համար/ | տուփ | 2 | 5,841,020 | 4,123,200 | 0 | 4,123,200 | «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ |
| 7. | **Վիրաբուժական գործիքներ** /Բռնակ ձեռքի ակտիվացման համար, նախատեսված harmonic gen11 գեներատորի համար/ | տուփ | 7 | 8,573,250 | 8,165,500 | 0 | 8,165,500 | «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ |
| 8. | **Վիրաբուժական գործիքներ** /Ենթակոճային շրջանի, վերին և ստորին ծնոտի աղեղի և մարմնի կոտրվածքների քիչ ինվազիվ բուժման համար նախատեսված՝ ներբերա-նային մուտքով, 90 աստիճանի տակ ծակելու և պտուտակներ ձգելու համար նախատեսված սարքավորման գործիքների հավաքածուի ծախսվող նյութերի հավաքածու:/ | հավաքածու | 1 | 5,772,300 | 5,760,000 | 0 | 5,760,000 | «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ |
| 9. | **Վիրաբուժական գործիքներ** /Դիմածնոտային վիրաբուժության համար նախատեսված ունիվերսալ բարձր արագության էլեկտրական ուժային սարքավորման ուժային մոդուլի հավաքածու:/ | հավաքածու | 1 | 14,040,551 | 14,000,000 | 0 | 14,000,000 | «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ |
| 10. | **Վիրաբուժական գործիքներ** /Դիմածնոտային վիրաբուժության համար նախատեսված ունիվերսալ բարձր արագության էլեկտրական ուժային սարքավորման ծայրակալների հավաքածու/ | հավաքածու | 1 | 15,727,460 | 15,700,000 | 0 | 15,700,000 | «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ |
| 11. | **Վիրաբուժական գործիքներ** /Դիմածնոտային վիրաբուժության համար նախատեսված ունիվերսալ բարձր արագության էլեկտրական ուժային սարքավորման շեղբերի, շաղափների և մաքրման, խնամքի համար անհրաժեշտ միջոցների հավաքածու/ | հավաքածու | 1 | 5,890,000 | 5,870,000 | 0 | 5,870,000 | «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ |
| 12. | **Վիրաբուժական գործիքներ** /Կիֆոպլաստիկայի համար նախատեսված բարձր խտության ցեմենտ՝ խառնման և ներարկման հիդրավլիկ համակարգով/ | հատ | 10 | 12,000,000 | 12,000,000 | 0 | 12,000,000 | «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ |

3.2 Մասնակցի գնային առաջարկի հաշվարկման ճշտությունը /հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

3.3 Քանի որ **«Բժշկական պարագաների»** ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀՊՆՆՏԱԴ- ԳՀԱՊՁԲ-9/8» ծածկագրով ընթացակարգին հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ, ուստի հիմք ընդունելով ընթացակարգի հրավերի 8.6 և 8.7 կետերը գնահատող հանձնաժողովը որոշեց գների նվազեցման նպատակով **25.12.2017թ. ժամը 11:30-ին** ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) անցկացել բանակցություններ:

**25.12.2017թ. ժամը 11:30-ին** կայացած նիստում հանձնաժողովն արձանագրեց, որ կազմակերպված բանակցությանը «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ն չներկայացավ և առաջարկված գները մնացին անփոփոխ:

3.4 Ըստ ներկայացված տվյալների «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ն 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ԱԱՀ վճարող է:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:*

3.5 **28.12.2017թ., ժամը 15:00-ին** կայացած նիստում, հանձնաժողովն արձանագրեց, որ «Ինտերմեդ գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված վճարման պահանջագրում էլեկտրոնային ստորագրությունը դրված է, ոչ թե «18ա» դաշտում, այլ փաստաթղթի ներքևի հատվածում: Հաշվի առնելով նշված հանգամանքը՝ հանձնաժողովը որոշեց դիմել մասնակցի կողմից նշված «Կոնվեսբանկ» ՓԲԸ-ին՝ պարզելու համար արդյոք «Ինտերմեդ գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված վճարման փաստաթղթերը անհրաժեշտության դեպքում կարող են բավարար լինել՝ բանկի կողմից վճարում իրականացնելու համար: Հանձնաժողովը որոշեց կասեցնել նիստը և այն շարունակել հարցի լուծումից հետո:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 1: Հանձնաժողովի անդամ ՀՀ ՊՆ ռազմաբժշկական վարչության մատակարարման բաժանմունքի պետ, բ/ծ կապիտան Ն. Հարությունյանը դեմ քվեարկեց հանձնաժողովի ընդունած որոշմանը:*

3.6 **26.01.2018թ. ժամը 15:00-ին** կայացած նիստում, գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով պատվիրատուի ղեկավարի հանձնարարությունն առ այն, որ ընթացակարգերը շարունակել և չսպասել բանկերի պատասխաններին, որոշեց կասեցված ընթացակարգը շարունակել և իրականացնել էլեկտրոնային գնահատում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/8» ծածկագրով ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի որոշման մասին.**

(Ռ. Մարդոյան)

4.1 29 .01.2018թ. (էլեկտրոնային գնահատման արդյունքում) «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկի հիման վրա ընթացակարգի 1-12-րդ չափաբաժիններում 1-ին տեղ զբաղեցնող ճանաչվեց՝ «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ն:

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի **հրավերի 2-րդ մասի (հայտը պատրաստելու հրահանգի) 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը**:

4.3 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ընթացակարգի հրավերի ***«Ֆինանսական միջոցներ»*** որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին**

Ռ. Մարդոյան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:*

**6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

(Ռ. Մարդոյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/8» ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը ժամը 11⁰⁰-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:*

| | |
|---|---|
| **Գնահատող(ԳԱՊ)** | Հ. Մելիքյան |
| **Գնահատող** | Հ. Ավետիսյան |
| **Գնահատող** | Ն. Հարությունյան |
| **Գնահատող** | Ս. Նիկոլյան |
| **Գնահատող** | Կ. Բրուտյան |
| **Գնումները համակարգող՝** | Ռ. Մարդոյան |

29.01.2018 թ.